# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ՎԻ ԵՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-25/40 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 13 | Մարմնամարզական նստարան – Մարմնամարզության նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի մետաղական ոտքերից և հենակից: Նստելատեղը և տակամասը պետք է պատրաստված լինեն հատուկ մշակում անցած սոճու կամ խեժափիճինի կամ փշատերև այլ ծառերի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները պետք է լինեն կլորացված: Մարմանամարզական նստարանի մակերեսը պետք է լինի խնամքով հղկված բարձրորակ խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ երեք բաղադրիչ անգույն լաքով: Նստելատեղի չափերն են՝ 3000մմ երկարություն, 300 մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի չափերն են՝ 2600մմ երկարություն, 100 մմ լայնություն և 37-40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է հնարավորություն տան ունենալ 300 մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պետք է պատրաստված լինեն 30x30x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները պետք է լինեն հղկված,փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն □անտրացիտ□ ներկանյութով: Մետաղական կառուցվածքը միացվում է միջանցիկ հեղյուսե մանեկային ամրացումով: Նստատեղի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նստատեղի հարթության վրա: Մինչ մատակարարումը՝ ապրանքի նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և/կամ հավաքումը իրականացվում է Մատակարարի կողմից իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում |

| | |
|---|---|
| | 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Մատակարարի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարը տրվում է զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չի կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

"ВИ ЭС ТИ СКАЙ" ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/40 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 13 | |